ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ПРОФСОЮЗ РАБОТНИКОВ ГОСУЧРЕЖДЕНИЙ АРМЕНИИ

UNION OF STATE, LOCAL GOVERNMENT AND PUBLIC SERVICE EMPLOYEES OF ARMENIA

«11» մարտի 2025թ.
N 19-01

Երևանի քաղաքապետ
Տիգրան Ավինյանին

Հարգելի պարոն Ավինյան

Երևան քաղաքի Ավագանու 2025թ. հունվարի 31-ի N 270-Ն որոշմամբ փոփոխություններ կատարվեցին միասնական տոմսային համակարգի մասին ավագանու որոշման մեջ, սահմանելով «մեկ ուղևորության» տոմսը, որի արժեքն է 150 դրամ, ինչը միանգամայն ողջունելի է:

Սակայն, փաթեթային տոմսերի արժեքները նույնպես համապատասխան վերանայման կարիք ունեն:

Հաշվի առնելով միասնական տոմսային համակարգի փաթեթային տրամաբանությունը՝ կարևոր է տոմսային փաթեթների համար այնպիսի արժեքներ սահմանել, որպեսզի տրանսպորտից կանոնավոր օգտվող ուղևորների համար այդպիսի փաթեթների ձեռքբերումը շահավետ լինի: Այնինչ, օրինակ, 10 ուղևորություն ներառող փաթեթի արժեքը սահմանված է 1500 դրամ, որը 150 դրամանոց տոմսի 10-ապատիկն է: Իսկ 30 օրվա տոմսի արժեքը (9000 դրամ) զգալիորեն գերազանցում է ամսվա ընթացքում մեկանգամյա տոմսերով միայն աշխատանքի ուղևորվող (ամսվա մեջ շուրջ 42 ուղևորություն) ուղևորների ամսական ծախսը (42*150=6300): Այսպիսով, փաթեթային տոմսերի ձեռքբերումը ներկայիս արժեքներով ուղևորների մեծամասնության համար ձեռնտու չէ: Ավելին՝ ուղևորները հակված չեն երկարաժամկետ տոմսային փաթեթներ ձեռք բերելուն՝ որոշակիություն և վստահություն չունենալով մոտ ապագայի հանդեպ: Հետևաբար, անհրաժեշտ է փաթեթների այնպիսի արժեքներ սահմանել, որպեսզի դրանց օգտագործումն ավելի շահավետ լինի, քան մեկ ուղևորության տոմսերը:

Հասցե՝ 0010, ք. Երևան
Վ. Սարգսյան 26/3, 501 ս.

Address: 26/3 V. Sargsyan st,
Office 501, Yerevan, 0010

Адрес: 0010, г. Ереван
ул. В. Саргсяна 26/3, офис 501

Tel: +37410580582 URL: www.arhmiutyun.org Email: profrosgu@gmail.com Facebook: facebook.com/arhmiut

Փաթեթների ցածր պահանջարկի մասին է վկայում նաև Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոնի կողմից հնչեցրած տեղեկատվությունը, որի համաձայն ուղևորների գերակշիռ մասն օգտվում է մեկանգամյա տոմսերից:

Հաշվի առնելով վերոնշվածը՝ առաջարկում ենք վերանայել փաթեթային տոմսերի արժեքները՝ ուղևորների կողմից դրանց օգտագործումը խթանելու համար :

Մասնավորապես, առաջարկում ենք՝

- 10 ուղևորություն ներառող տոմսային փաթեթի արժեքը սահմանել 1200 դրամ:

- 30 օրվա փաթեթի (առանց արտոնությունների) արժեքը սահմանել 4500 դրամ:

-Համապատասխանաբար վերանայել նաև այլ փաթեթների արժեքները:

Միաժամանակ հիշեցնում ենք, որ 2025թ հունվարի 14-ին դիմել ենք Երևանի քաղաքապետարան թիվ 05-01 գրությամբ (մուտքագրված է՝ **Դ-3937-25**) որով մի շարք հարցումներ ենք կատարել և դիտարկումներ ներկայացրել, սակայն գրությանը մինչ օրս պատասխան չենք ստացել:

Հարգանքով՝
Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի
աշխատողների արհմիության
նախագահ հաստատված է էլ ստորագրությամբ **Ա. Ասատրյան**